

զիստներ կրնան ըլլալ, և թէ չորս կողմերնին ծովը պատաձ ըլլալով՝ աղջկ ամրութիւն մը կրնան ըլլալիրենց թըշնամեաց յարձակմանցը գէմ. և միանգամայն ապատամնարան մը կրնան ունենալ հոն, եթէ բուն իրենց երկրէն ատենօք հալածուելու որ ըլլան. բաւական է որ, կ'ըսէ, շուտ մը նաւերնին իջնալով կտրեն անցնին ծովը ու իրենց առջի խրկած գաղթականներուն քովդիմեն: Արձանագիրը կը լմըննայ՝ գրութեան թուականովը, որ է՝ երկրէ մէջ շնորհանքն (երկրաշարժ) ու անոր հետեւանք յեղափոխութիւններէն իրեւ հարիւր դարի վերջը:

### ԱՇԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

**Զինատանի քրիստոնեուրինը :**

Քրիստոնէութեան պայծառանալը երկրի մը մէջ՝ Քաղաքականութեան պայծառանալը կը ցուցընէ: Ո՞է կը առանց մէկալին հաստատուն ու Ճշմարիտ չկրնար ըլլալ: Այս բանիս որչափ աւելի կարող արագ անձամք, այնշափ աւելի հիմն ջանք ու փոյթ ունի որ այն ազգաց մէջ ալ, որ քաղաքականութեան զուրկ են, տարածել զայն՝ Ճշմարիտ կրօնից ձեռքով: Ո՞րչափ ուրախալի բան է քրիստոնէի մը համար լսել որ այսօրուան օրս իր Կոտուծոյ անարգութեան գործին ոչ միայն կրթեալ եւրոպացին, չապանակ սև խափշիկը, վայրէնի ափրիկեցին ու ամբարտաւան չինը կը մեծարեն ու կ'երկրագեն:

Հոս Չինատանի առաքելական քարոզաց մէկուն նորերս գրած նամակը թարգմաննենք, որովլաւ կ'իմացուի թէ ինչ յաղթանակներ կ'ընեն, և դեռ կը յուսանք քրիստոնէութիւնն ու քաղաքակրթութիւնը այն աշխարհքներուն մէջ:

“Քիանկենան քաղաքին մէջ՝ առատ հունգը կայ և առաքելական քարոզաց համար աշխատելու ընդարձակ ասպարէզ մը: Կաւապաշտները օր օրուան վըրայ ուղղափառութեան կը մօտենան:

1854<sup>են</sup> յուլիսէն՝ ինչուան 55<sup>են</sup> նոյն ամիսը, որ է ըսել ամբողջ տարի մը, գրեթէ 2000 կռապաշտք մկրտուածէն. երախայից թիւն ալ երթարվ կ'աշի, և կռապաշտները հետզէտէ զըրուելու կու գան, մասնաւորաբար այն գաւառին բնակիչները՝ ուր որ ես կը կենամ. և ինձի կ'երեւայ թէ բուն ինքն սատանան է, մոլորութեանց հայրը, որ ասոնց դէպ՚ի Ճշմարտութիւն կ'առաջնորդէ: Այս բացատրութիւնաշատերուն չափազանց և անհաւատալի կ'երեւայ, սակայն իրօք անանկ է: Աստանան կը սկսի նեղել ու չարչարել կռապաշտ մը, և յատուկ կերպով մը կանանց գասէն. ընտանիքը, ինչպէս կրնայ մակաբերուիլ, վշտացած՝ կը սկըսին ամէն կարգէ գուրս սնոտիապաշտութիւնքը կատարել, կախարդ, քուրմ, քրմուհի կը կանչէն, և ամենեին օգուտ մը չեն տեսներ. վասն զի սատանան իր բարեկամները լաւ կը ճանչնայ: Ան ատեն կը դիմեն Ճշմարիտ Կոտուծոյն, զոր քրիստոնէայք կը պաշտեն, եկեղեցի կու գան, և պարզ կերպով քահանան կ'ուղեն տեսնել, հետը խօսիլ, օրհնուիլ իրմէ, միտալ կամուրիշ հոգեոր բան մը առնուլ, կամ կատարել:

“Այս կը յորդորեմ զիրենք սուրբ հաւատքը ընդունիլ, գիւական խաբէութիւններէ ետ կենալ. մներնին կը խրկեմ քրիստոնէայ ծառայ մը, և կամ քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնող մը, որպէս զի բացատրէ անոնց մեր սուրբ կրօնքին խորհուրդները, և քրիստոնէից պարտքերը:

“Այս ժողովուրդը ընդհանրապէս շատ ընդդիմութիւն չհաներ քրիստոնէայ ըլլալու. թէ որ տուներնին աւելորդապաշտական բաներ ունենան, ինչպէս զրուածքներ, հմայք, կռոց արձաններ, և այլն, ամէնն ալ կ'այրէն, և իրենց անունը երախայից ցանկին մէջը զրել տալով, կը սկսին քրիստոնէութեան հրահանգները սորվիլ. և երբոք բաւականապէս կրթուին, և իրենց հաւատոցը վրայ հաստատուն մնանուն փորձը ցուցընեն, կը մկրտուին:

„Ապային ամենուն հետքանը ասանկ դիւրութեամբ ցլմբնար . կ'ըլլան այն պիսիք ալ՝ որոնց հետ հարկ է վիճել, խօսիլ, համբերել, և ամէն հարկաւոր ապացուցութիւն մէջ բերել : Ի՞ս դժուարութիւնները աւելի գիտուններուն հետ վարուելու ատեն կը հանդիպին . որոնք լոսփուկիոսի գրուածներէն քանի մը տող բան միտք առած ըլլալով՝ հպարտութեամբ իրենց գիտութեանը վրայ վստահացած են, ու կ'արհամարհեն ուրիշ ամէն կրօնքները, ամէն տեսակ տմարդի և անտեղի մնոտիապաշտութիւններ ռամկին սովորեցնելով . ուր ընդհակառակն քրիստոնէական հաւատոց ձմարտութիւնը ընդուղներուն մէջ ամենէն աւելի յօժարամիտքը աղքատ և պարզիրտ մարդիկն են :

„Ո՞ենք հիմա մեր այս առաքելութեան սահմանին մէջ առանց դժուարութեան կը կատարենք հանդիսական տօնները հրապարակաւ քրիստոնէից յատուկ մատուանը մէջ : Ի՞նցեալ տարուան սեպտեմբերի 6<sup>ն</sup> եկեղեցական հանդէս մը ունէինք Քամ-հայ քաղաքին մէջ ուր յայտնի տեսնուեցաւ քրիստոնէից ոգւոյն եռանդը, և կուապաշտից մեզմէ ունեցած ակնածութիւնը : Ի՞սկէ տարի մը առաջ չըսր քարոզիչ քահանայ մեռած էր հոս, որոնց մարմինը լաւ կերպով մը արկեղաց մէջ գոցած՝ Չինացւոց դադաղներով մեր Օիքավլէ քաղաքը ունեցած տունը փոխադրեր էին . վասն զի Քամ-հայի մէջ եղածնոյն ատենուան պատերազմը արգելք եղեր էր քաղքէն դուրս ունեցած չին գերեզմանատունը տանելու զիրենք : ( Ճ որոշուեցաւ այն դադաղները գերեզման փոխադրելու համար, քրիստոնէայք որ հանդիսին օրը իմացեր էին՝ խմբովին եկան այլ և այլ գաւառներէ արք և կանայք, աղջիկներ ու տղաք : ) Իսիթարութեան և արտասուաց օր մըն էր տեսնալը այն ընտիրնորադարձ քրիստոնէից բազմութիւնը՝ որոնք խումբ խումբ բաժնուած նաւակներով կու գային, իրենց մեծարգութերը առաջիկն էին . միայն վեմսաղմուներուն տիսուր արձագանքը կը լուսուէր :

մար . մէջերնէն շատերը ապաշխարութեան և հաղորդութեան սուրբ խորհրդոց մերձեցան, և եռանդուն սրբութիւն մը հանգուցելոց հոգւոցը համար հանգիստ ու խաղաղութիւն կը մաղթէին : Խնչպէս անկեղծ և ձշմարիտ սրտի ցաւէ առաջ եկած արցունքներ էին որոնցմով մեծարգոյ քարոզքաց դագաղը կ'ողողուէր . և հանգստեան սրգաւոր արարողութիւնքը կատարուելէ վերջը, տիսուր ամբոխը սկսաւ գեապի ի գերեզմանատուն երթալ, որ եպիսկոպոսարաննէն գրեթէ երկու մղոն հեռուէր, և հօն համար քաղքին շատ ձամբաներէն պէտք էր անցնիլ : Ի՞նչեւն կ'երթար խաչելութիւնը, անոր ետեւէն Օիքավլէի դպրոցին աշկերտները, քառասուն հոգի քրիստոնէական վարդապետութիւն սորվեցընողք, մեծ ու պզտիկ հայրապետանոցին աշկերտները իրենց եկեղեցական զգեստներով՝ ամենուն ձեռքը վառած կերպներ : Ո՞եւելոց ամէն մէկուն դագաղը ութական հոգի կը տանէին, և հետերնին քսան Հիսուսեան կրօնաւորներ կ'երթային իրենց եկեղեցական զգեստներովը եպիսկոպոսին հետ մէկտեղ : Քրիստոնէից մեծ մասը, մասնաւորապէս կանայք, առաջուց գերեզմաննոց գնացեր էին . մնացողները դագաղին ետեւէն կու գային, իրենց բնիկ լեզուովը մեռելոց աղօթքները երգելով : Ոմիկնապահներ թափորին մէջ կարգաւորութիւն պահելու համար մէկտեղ կու գային . ձամբաները ամբողջ վերէն 'ի վար կուապաշտներով լեցուն էին, որոնք իրենց խանութներուն մէջ, և խումբ խումբ բազմութեամբ ձամբաներուն գլուխը կեցած, լուս ապշած ու զարմացած մեղի կը նայէին : Ո՞յն, կը խոստովանիմ անկեղծութքը, որ այսպիսի կարգաւորեալ թափոր մը չեմտեսած ոչ 'ի Վաբոլի և ոչ ալ 'ի Հոռվլմ . ամեննեին ձայն մը չէր լսուեր ձամբաներուն մէջ, խանութպանք իրենց գործքերը թողուցեր էին . միայն վեմսաղմուներուն տիսուր արձագանքը կը լուսուէր : Ո՞չ, ով արդեօք ասկէ

ԱՅ տարի առաջ կրնար մնդէն անցը-  
նել թէ օր պիտի գայ յորում քահա-  
նայք իրենց սրբազն զգեստներովը  
խաշելութեան հետ մէկտեղ Ծինաց  
բազմամարդ քաղաքներէն մէկուն մէջ  
պիտի քալեն, բոլոր կուապաշտներուն  
զարմանք պատճառելով։ Իայց ահա  
Եստուած այսպիսի մեծ գործ մը այս-  
օրուան օրս ուզեց ու կատարեց, իր կա-  
մացը գործիք առնելով Կաղղիոյ տէրու-  
թիւնն ու ընտիր պաշտօնէից խումբ մը։

„, Կուապաշտները կը տեսնեն մեր  
հանդէսները, մեր արարողութիւնը, և  
եկեղեցւոյն փառաւորութիւնը, կը զար-  
մանան, շատն ալ կը գովեն. և թէ որ  
հիմկուհիմայ գեռ կարողութիւն չու-  
նին մեր սուրբ կրօնքը ընդունելու,  
բայց վար զարնելով ալ չեն խօսիր  
իբրև անարդ, ատելի ու վնասակար  
բան մը. այս բանս Վիհանկնանի մէջ  
աւելի յայտնի կը տեսնուի : Ես ամէն  
բաներուս նախանձողներ ալ չեն պակ-  
սիր, բայց այս կուսակցութիւնը այնչափ  
ոյժ չունի : Կղղափառաց յառաջադի-  
մութիւնը նորաղանդից միշտ գրգիռ մըն  
է որ իրենք ալ Ծինաց մէջ իրենց ու-  
սումբ տարածեն : Իաց՚ի զանազան ժո-  
ղովարաններէն, զորս Վամհաքաղքին  
մէջ ունին, քաղաքներ և գեղերը կը վա-  
զեն, առատ առատ աստուածաշունչներ  
կը բաժնեն, նոյնպէս Ծինաց լեզուովը  
թարգմանուած ուրիշ այլ և այլ գրեեր  
ալ : Խրբեմն գեղերու ու քաղաքներու  
մէջ բազմութեան առջեւ ալ կը քարո-  
զեն, ուսկից ժողովուրդը ուրիշ բան չի-  
հասկրնար, բայց միայն քանի մը բա-  
րոյական իմաստներ : Ը ատ անգամ  
կ'ըլսայ որ իրենց քարոզները կը լմըն-  
նան ուղղափառ կրօնքի և կամ խոս-  
տովանութեան դէմ խօսելով, թէպէտ  
և հասարակ ժողովուրդը խորհրդական  
խոստովանութեան և ոչ անունը գիտէ .  
քարոզէն վերջը գիրքերը կը բաշխեն .  
շատ անգամ ծառային ձեռքով կը ցը-  
րուեն գիրքերը, և անանկով կատարած  
կը համարին իրենց առաքելութիւնը :

„, Վաղաքացի և գեղացի չինացիք ա-  
սոնց իրենց լեզուովը Ֆատուայէն կ'ըսեն՝

որ գիրք բաժնող ըսել է . զիրենք տես-  
նելու կը վազեն անցնելու ատենսին, կը  
ծիծաղին և դիւրին է ենթազրելը թէ  
առած գրքերնին առ ինչ կը գործածեն :

„, Վիհանկնան քաղաքին մէջ նորա-  
զանդից քարոզութեան կերպը աւելի  
սրսորդութեան կը նմանի . իրեք չորս  
փառաւոր նաւակներու մէջ կը նստին,  
հետերնին ունենալով իրենց կինն ու  
տղաքը, և որսի հրացաններն ալ ձե-  
ռուընին : Խրբեմն գեղ մը կամ քաղաք  
մը կը հանդիպին, ուր սուրբ գրոց օրի-  
նակներ բաժնելէն ետքը, նորէն իրենց  
զուարձութիւնն և որոը առաջ կը տա-  
նին, և ասով իրենց առաքելական քա-  
րոզութեան պաշտօնը կատարած սեպե-  
լով ենթազրեալ գարձի եկողներուն ա-  
նուանքը կը նշաննեն, և իբրև նորազան-  
դութեան յաղթանակ մը կը հրատա-  
րակեն „ :

Ո՛չափ տարբեր է այս կերպը ուղ-  
ղափառ եկեղեցւոյ քարոզչացը բանե-  
ցուցած կերպէն, որուն նոյն իսկ այն  
կողմերէն դարձող բարեսէր նորազանդ-  
ները զարմացմամբ կը վկայէին մեզի և  
կը նախանձէին, ցաւելով իրենց քարոզ-  
չացը անձնասէր քան քրիստոսասէր գնա-  
ցիցը վրայ :

## ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆԱՌԻ ԹԻՒՆ

Նոր երկրի Շուն :

Ը ուներու ցեղին մէջ Առ երկրի  
Ը ուն ըսուածը աւելի ազնիւ սեպուած  
է . վասն զի թէ տեսքովը և թէ մարդ-  
կանց ըրած ծառայութեամբքը վեր  
է քան իր տեսակին ուրիշ նները, և  
Կանգրահեր՝ կոչուածէն ալ աւելի օգ-  
տակար : Խրաւ է որ գանգրահերը իր  
տիրոջը վրայ ունեցած սիրովը կամ ըն-  
տանութեամբ մեծ օգնութիւն է անոր  
ու այլ և այլ ձախորդութեանց մէջ ա-